**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/21161-2026

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1361-22.05.2026-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2026 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 531 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հեռ. 010515686
Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1361-22.05.2026-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրա-պետության դրոշի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ ստորև ներկայացնում է իր դիտարկումներն ու առաջարկությունները:

1. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է օրենքի 3-րդ հոդվածում լրացնել նոր 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես բարձրացվում է Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր համայնքի վարչական տարածքի հիմնական մուտքերի մոտ:»:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «համայնքի վարչական տարածքի հիմնական մուտքերի» ձևակերպումն անորոշ է և պարզ չէ, թե որ հատվածում է Նախագծով նախատեսվում տեղակայել ՀՀ դրոշը, ուստի իրավական որոշակիություն ապահովելու տեսանկյունից, առաջարկում ենք վերանայել Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված կարգավորումը կամ Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ լրացուցիչ պարզաբանել առաջարկվող կարգավորումը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Երևանի վարչական սահմանները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով, իսկ նույն օրենքի 6.1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի սահմանների նկարագրությունը տրվում է նույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված 6-ում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ոչ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և ոչ էլ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում «համայնքի վարչական տարածքի հիմնական մուտք» ձևակերպում առկա չէ, ավելին՝ Երևան համայնքի վարչական սահմանների նկարագրությունը տրված է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի N 6 հավելվածով, որի համաձայն՝ Երևան համայնքի վարչական սահմանները նկարագրվում են քարտեզագրական և տեղագրական տվյալներով՝ սահմանային նկարագրությամբ՝ առանց հիմնական կամ այլ մուտքերի առանձնացման, ուստի առաջարկվող կարգավորումն անհասկանալի է և անորոշ:

Վերոնշյալ դիտողությունը վերաբերում է նաև մյուս համայնքներին, որոնց վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին»

օրենքի համապատասխան հավելվածներում նույնպես համայնքի վարչական տարածքի հիմնական մուտքերի վերաբերյալ նկարագրություն առկա չէ:

Միաժամանակ հայտնում ենք, որ վարչական տարածքները կարող են ունենալ մի քանի մուտք, ուստի անհասկանալի է նաև, թե դրանցից որը կարող է համարվել հիմնական:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ Նախագծով նախատեսվող կարգավորումը ենթակա է վերանայման:

2. Նախագծի 1-ին հոդվածով ՀՀ դրոշը նախատեսված է բարձրացնել ՀՀ յուրաքանչյուր համայնքի վարչական տարածքի հիմնական մուտքերի մոտ, իսկ Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ ՀՀ դրոշը պետք է բարձրացնել յուրաքանչյուր քաղաքային և գյուղական բնակավայրի վարչական սահմանի մուտքի մոտ:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն Համայնքներն ինքնակառավարվող վարչատարածքային միավորներ են:

Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերը՝ առանձին կամ այլ բնակավայրի (բնակավայրերի) հետ միասին, ընդգրկվում են համայնքների մեջ:

Հայաստանի Հանրապետության համայնքների ցանկը, ըստ նրանց կազմում ընդգրկված բնակավայրերի, տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 2-ում:

Վերոնշյալ կարգավորումից բխում է, որ բնակավայրերը ներառված են համայնքների մեջ, ուստի Նախագծով նախատեսված կարգավորման և Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ նախատեսված առաջարկի միջև առկա է հակասություն, քանի որ անհասկանալի է՝ միայն յուրաքանչյուր համայնքի, թե բնակավայրերից յուրաքանչյուրի մուտքի մոտ է նախատեսվում դրոշը տեղադրել:

Այս կապակցությամբ առաջարկում ենք Նախագծով նախատեսված կարգավորումը վերանայել կամ Նախագծի և Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ սահմանված կարգավորումները համապատասխանեցնել միմյանց:

3. Նախագիծն անհրաժեշտ է լրացնել նոր դրույթով, ըստ որի կսահմանվի, որ դրոշի տեղադիրքի, բարձրացման կարգի և այլ չափանիշների առանձնահատկությունները սահմանում է Կառավարությունը՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում: Այս համատեքստում անհրաժեշտ է հստակեցնել նաև թե որ մարմինն է պատասխանատու դրոշի բարձրացման և սպասարկման համար (մարզպետ, համայնք): Լրացուցիչ կարգավորման անհրաժեշտություն կունենան դրոշի բարձրացման տեղադիրքի (հողամասի, գույքի) պատկանելությանն առնչվող հարցերը:

Ամփոփելով վերոշարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագիծն անհրաժեշտ է լրամշակել ներկայացված դիտարկումների և առաջարկությունների հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 531 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Առնակ Ավետիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Դրոշի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-1361-22.05.2026-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1361-22.05.2026-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2006 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում լրացնել նոր 1.1-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես բարձրացվում է Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր համայնքի վարչական տարածքի հիմնական մուտքերի մոտ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

Առկա իրավիճակը

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում բացակայում է իրավական կարգավորում, որով պարտադիր կսահմանվեր Հայաստանի Հանրապետության պետական դրոշի տեղադրումը բոլոր բնակավայրերի մուտքերում: Գործնականում որոշ համայնքներում պետական դրոշներ տեղադրված են համայնքային նախաձեռնությամբ, սակայն միասնական մոտեցում եւ պարտադիր պահանջ գոյություն չունի:

Արդյունքում՝ բազմաթիվ բնակավայրերի մուտքերում պետական դրոշը բացակայում է կամ գտնվում է ոչ պատշաճ վիճակում, ինչը չի ապահովում պետական խորհրդանիշների լիարժեք եւ համաչափ ներկայացվածությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Հայաստանի Հանրապետության պետական դրոշը պետականության, ինքնիշխանության եւ ազգային արժանապատվության կարեւորագույն խորհրդանիշներից է: Բոլոր բնակավայրերի մուտքերում պետական դրոշի առկայությունը՝

կուժեղացնի ազգային ինքնագիտակցությունը,

կստեղծի միասնական պետական միջավայր,

կունենա կրթական եւ դաստիարակչական նշանակություն,

կխթանի պետական խորհրդանիշների նկատմամբ հարգանքը քաղաքացիների եւ այցելուների շրջանում:

Առաջարկվող կարգավորումը

Առաջարկվում է օրենքով սահմանել, որ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքային եւ գյուղական բնակավայրի վարչական սահման մուտք գործելիս պարտադիր պետք է տեղադրվի Հայաստանի Հանրապետության պետական դրոշ:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է՝ նպաստել ազգային ինքնագիտակցության ամրապնդմանը, ապահովել միասնական պետական խորհրդանշական միջավայր, խթանել պետական խորհրդանիշների նկատմամբ հարգանքի ձեւավորումը քաղաքացիների եւ Հայաստանի Հանրապետություն այցելող անձանց շրջանում: